

լուծ են ընկերութեան հիւանդ անդամներին և օգնում նրանց բանիւ և գործով: Առանձին մի զբաղմունքով զբաղուած է ընկերութեան անդամների համար աշխատանք և պարագմունք գտնելով: Անցեալ տարի այդ գրասենեակ 300-ից աւելի երիտասարդների համար պարագմունք և պաշտօն է գտել:

Ընկերութիւնը մեծ յարգանք և ժողովրդականութիւն է վայելում նիւ-Եօրքում: զբաղմունքներով շատերը մասնակցում են նրան: Ճիւղերն այնպէս են կազմուած, որ իւրաքանչիւրը բաւարարութիւն է տալիս քաղաքի բնակիչների որոշ մասի կարիքներին: Այսպէս, գերմանական թաղի կենտրոնում գտնուում է գերմանական ճիւղը, որտեղ խօսակցական լեզուն գերմաներէնն է: լատինական թաղում է ֆրանսիական քրիստոնէական ընկերութիւնը: կայ նոյնպէս չինական ճիւղ՝ երիտասարդ չինացիների համար, որ տեղ նոքա սովորում են անգլիերէն և ծանօթանում տեղեկան քաղաքակրթութեան հետ: Քաղաքի կենտրոնում է, Վոլոմբիայի համալսարանից ոչ հեռու, ռուսանոցական ակումբը: Քրիստոնէական ընկերութեան ռուսանոցական ճիւղը, ժամանակ առ ժամանակ այս կամ այն պրօֆեսորը երեկոյթ է սարքում ռուսանոցների համար, որտեղ թէյի կամ սուրճի ժամանակ մտերմական զրուցատրութիւններ են լինում գիտութեան այլ և այլ ճիւղերի, կրօնի և փիլիսոփայական խորհրդների վերաբերեալ: Բօուէր-Ստրիտում, քաղաքի աւելի աղքատ զասակարգի թաղում զբաղւում է քրիստոնէական ընկերութեան մի առանձին բաժանմունք զպրոցական հասակի մանուկների համար:

Ընկերութեան ծախսերը հոգացուում են մասամբ անդամակցական վճարներով, մասամբ զբաղմունքի և անշարժ կայքերի եկամուտներով, մասամբ ևս ընկերութեան հարուստ բարեկամների փառնագ նուիրաբերութիւններով: Վերջին տարեկան հաշուետուութեան համաձայն ընկերութեան հիմնադրամը հաւասար էր 130,000 դոլլարի (175,000 ռուբլի): տարեկան ծախք եղել է 43,000 իսկ այս տարուայ նախահաշիւն է 52,000 դոլլար:

Անցեալ տարի նիւ-Եօրքի մեծատուն Սամուէլ Ինսի ընծայեց «Քրիստոնէական ընկերութեանը» մի տուն 200,000 դոլլար արժողութեամբ: քաղաքի վաճառաւոր մասի կենտրոնում: Նորերս վերատեսչութեան ժողովը որոշեց բաժանմունքներից մէկի համար առանձին շինութիւն կառուցանել քաղաքի հիւսիս-արեւմտեան մասում: Շէնքը կընստի 375,000 դոլլար, որից 200,000-ն արդէն հաւաքուած է ընկերութեան բարեկամների նուիրատուութիւններով: անցեալ տարի «ընկերութիւնն» ունէր մօտ 5000 մշտական անդամ: մեծամասնութիւնն ի հարկէ բողոքականներից:



## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

### ՊԱՐԹԵՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Ե Ի

ՆՐԱՆՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՅՈՅ ՀԵՏ.

(250 Քրիստոսից առաջ — 226 Քրիստոսից յետոյ)

(Շ ա թ ո ս ճ ա կ ո ս թ ի չ ի ճ).

Հոռվմա—պարթեական պատերազմները Հայաստանի համար.

Ֆրաստէս Գ-ի երկրորդ անգամ գահակալութիւնն առիթ եղաւ հռովմայեցիների պարթեական գործերին խառնուելուն: Օգոստոս կայսրը բռնեց Ֆրաստիսի կողմն և զբա փոխարէն ստացաւ նրանից Արասոսի և Անտոնիոսի պարտութեան ժամանակ պարթեաների ձեռքն անցած զրօշներն ու գերիք: Այս դէպքը տեղի ունեցաւ 20 թուին Քրիստոսից առաջ, երբ Օգոստոսը Ասորիքում էր: Ներքին խռովութիւնները տեւեցին Պարսկաստանում մինչև 9 թ. Քրիստոսից առաջ. այդ միջոցին Ֆրաստիսի փոխանակ երեք տարու չափ իշխեց Միթրիդատէս Գ. Նոյն ժամանակում ինքնուրուշութիւն ձեռք բերին և Մարք, որոնք Հռովմից խնդրեցին և ստացան իրենց Արտաւազդ թագաւորի որդի Արիոբարզանէս Բ-ին, իրրե թագաւոր: Ֆրաստէսը երրորդ անգամ գահակալեց 10—9 Քրիստոսից յետոյ և երկիւղ կրելով ներքին խռովութիւններից, իւր 8 որդիքն ու երկու կանայքը Հռովմ ուղարկեց իրրե պատանդ: Պարսկաստանում մնաց միայն մի իտալական ստրկուհու: Թէա Մուշա Ուրանիայի մանկահասակ որդին, որ գահաժառանգ էր նշանակուած: Սա էր որ իւր մօր սաղառնոց էր նշանակուած: Նա էր որ իւր տեղը թագաւորեց:

Նոր թագաւորած Ֆրաստէս Ե. կամ ինչպէս սովորաբար կոչուում է Փրաստակէսը նրապատեց հայկական ապստամբութեան ընդդէմ: Արտաւազդ Գ-ի, որ հռովմէացոյց պաշտպանեալն էր: Հայերը պարթեաւց օգնութեամբ դուրս վնդեցին իրենց երկրից Արտաւազդին և նրա պաշտպան հռովմէական զունդն և թա-



գաւորեցրին պարթևաց թիկնածու Տիգրան Դ-ին: Նոյն միջոցին Մարաստանից արտաքսուեցաւ և Արիորարզանէս Բ.: Օգոստոս կայսրը արևելեան գործերը կարգի բերելու համար ուղարկեց իւր թոռն Վայիոս կեսարին զէպի Ասորիք: Հայոց թագաւոր Տիգրան Դ. շտապեց հոռովապէս հետ հաշտուելու եւ նրանցից թագաւորը մանաւանդաւ: Փրատաւէսն եւս խաղաղութեան դաշն կոնց Դայիոս Կեսարի հետ: հրաժարուելով Հայաստանի գերիշխանութիւնից (1. Բրիտտոսից յետոյ):

Փրատաւէսը երկար չիշխեց, և թուին Քրիստոսից յետոյ տեսնում ենք նրան հռոմէական սահմաններում, ուր իւր երկրից հալածուած մեռաւ: Սրան յաջորդեց Արոգէս Բ. քսորից դառնալով իւր անագորոյն բարբի համար ատելի դարձաւ և որսի ժամանակ սպանուեցաւ (6. Քրիստոս յետոյ):

Պարթևները գեոպաններ ուղարկեցին Հռոմ և Օգոստոսից խնդրեցին Փրատաւէս Դ-ի որդիներից մէկին իրենց վրայ թագաւորեցնել: Ընտրուեցաւ Փրատի աւագ որդին Վոնոնէսը, որ իւր կրթութեամբ բոլորովին խորթացել էր պարթևներին, ուստի շուտով ատելի դարձաւ և նրա փոխանակ թագաւորական գահին տիրելու հրաւիրուեցաւ Ատրպատականի արքայ Արտաքանէս, որ մայրական կողմից արշակունի էր (10. Ք. յ.), Վոնոնէսը յաղթուեցաւ (16 թ.) եւ փախաւ Հայաստան, ուր հէնց այդ միջոցին անիշխանութիւն էր ուստի եւ ժողովուրդը նրան թագաւորեցրեց:

Արտաքանէս Դ. չէր կարող թող տալ, որ իւր հակառակորդը հարեան երկրում թագաւորէ, ուստի պատերազմ սպառնաց Հռոմէացոյց, եթէ մտադիր լինէին պաշտպանել Վոնոնէսին, Տիրերիոս կայսրը խաղաղութիւն էր ցանկանում: ուստի զիջաւ: մանատանդ երբ տեսաւ, որ Վասպուրականի եւ Բագրեւանդի ազատանին Արտաքանի կողմն է: Վոնոնէսը թողեց Հայաստանն եւ անցաւ նախ Ասորիք եւ ապա Արտաքանի պահանջմամբ քաշուեց Կիլիկիա: որտեղից փախստեան մի անյաջող փորձ անելու միջոցին սպանուեցաւ (19 թ.):

Պարթևների իշխանութիւնը քայքայուում էր: տէրութեան զանազան ծայրերում անկախ իշխանութիւններ էին կազմում: արքայից արքան շարունակ պատերազմներ էր մղում ապստամբների դէմ: Արտաքանէսը ոչ միայն ապստամբներին ընկճեց, այլ և կարողացաւ հարեան ազգերին երկիւղ ազդել, Հայաստանում թագաւորեցրեց իւր

անդրանիկ Արշակ որդուն և հռոմէացիներից սկսաւ Պատկազովկիան անդամ պահանջել, որովհետեւ այնտեղ իրանեան ազգեր էին բնակում:

Ընաջին դարում հռոմէա-պարթևական բաւոր պատերազմների սկզբնապատճառն Հայաստանի վրայ ունենալիք գերիշխանութիւնն է: Հռոմէի կայսրներից ամենախաղաղասէրն անգամ չէր կարող թող տալ, որ պարթևների գերիշխանութիւնը ճանաչուէր Հայաստանի վրայ, ուստի Տիրերիոսը Արտաքանի դէմ նոր թշնամիք յարոյց: Վրաց (Իրեքացոց) Փարսամանէս թագաւորին հոռովակցեց իրողեցին, որ իւր եղբորը, Միթրիդատէսին, Հայոց զահի ժառանգ ներկայացնէ: Արշակին սպանեցին իւր կաշառուած ծառայքը: վրացիք հեղեղեցին երկիրը իրենց հրոսակներով և տիրեցին Արտաշատ մայրաքաղաքին (35 թ.): Նրբ դրանից յետոյ Արտաքանը իւր միւս որդուն Արոգէսին, զօրքով Հայաստան ուղարկեց իւր եղբոր սպանման վրէժն առնելու և նրա գահը ժառանգելու: Փարսամանէսը դաշն կոնց Արշակների (Աղուանից) թագաւորի հետ և ձեռնարկեց մի այլ աւելի վրտանգաւոր գործ, որի շնորհիւ վրաց թագաւորները միշտ կարողացել են, չնայելով իրենց շնչին ուժերին, մեծ դեր խաղալ:—Նա բաց արաւ Պովկասեան դռներն հիւսիսային Սարմատների, կամ ինչպէս այլք կոչում են Այանների առաջ, որոնք դրամով և աւարով հեշտութեամբ էին զբաւում: Այս փորենի հրոսակները յարձակուեցան Հայաստանի վերայ, Արոգէսը դէմ դուրս եկաւ նրանց և մենամարտութեան մէջ վիրաւորուեցաւ Փարսամանէսից: երբ զօրքի մէջ տարածուեց արքայորդու մահուան սուտ լուրը, զօրքը ցրուեցան եղաւ: Մինչ Արտաքանէսը յաջորդ 36 թուին նորից կամենում էր պատերազմի բախտը փորձել Հայաստանում իւր յետեւ դժգոհ պարթևների կուսակցութեան և Տիրերիոսի ձեռքով պատրաստած խաղաւանանքն երեան եկաւ: Դժգոհների պարագլուխն էր հարուստ ու զօրաւոր Սիննակէսը, որ Տիրերիոսից խղրել ուստացել էր պատանդ արշակունիներից մէկին: Փրատաւէս Դ-ի որդի Փարատաւէսին, իրեն պարթևաց թագաւոր: Սա շուտով մեռաւ և նրան փոխարինեց Փրատաւէս Դ-ի թոռներից մէկը Տիրիդատէս անունով:

Մեծամեծներն միմեանց ետեւից թողին Արտաքանին և միացան նրա հակառակորդի հետ: Արտաքանէսը բարեք համարեց ազատական քաշուել ասպարիզից և գնալով Արկանաց աշխարհը, նորոգեց իւր հին յարաբերութիւնները հարեան թափառական ազգերի հետ:

Տիրիդատէս Դ. հռոմէական զօրքերով յառաջ խաղաց և տիրեց արևմտեան նահանգներին: Տիրքոն մտնելուց յետոյ շուտով թագ կապեց



ոանց սպասելու զօրաւոր արեւելեան սատրապների զայտեսան, որով և նրանց թշնամեցրեց իւր հետ: Գեղահայերը կրկին հրաւիրեցին Արտաւանէս Գ.-ին, որ Գահերից և Սակերից կազմուած բանակով եկաւ ու առանց պատերազմի զրաւեց իւր գահը: Տիրիզատէսը ապաստանաբան գտաւ Ասորիքում (36 թ.): Հռովմէացոց հետ հաշտութեան դաշն կոեց Արտաւանէս և իւր որդի Գարեհին ևս պատանդ տուաւ: Մի նոր գաւաղրութիւնից խոյս տալով՝ Արտաւանէս ապաւինեց Աղեարների Իգատէս թագաւորին: Պարթևների վրայ թագաւորեց Արտաւանէսի որդեգիր Կիննամոս: որ ապա ինքնակամ տեղի տուաւ Արտաւանէսին: Իգատէս թագաւորը վարձատրուեցաւ իւր հաւատարմութեան համար: բացի մի քանի պատուոյ նշաններից, նա ստացաւ և Մծիկն քաղաքը, որ իւրեց Հայոց թագաւորից: Հայաստանը կրկին ընկել էր պարթևեանց ձեռքը շնորհիւ Գայիոս կեսարի անմոռութեան: որ Հայոց թագաւոր վրացի Միթրիդատեսին Հռովմէ էր կանչել և գերութեան մէջ էր պահում: Արտաւանէսը հաւանօրէն մեռաւ 40 թ.-ին:

Նոյն թուին թագաւորեց Արտաւանէսի որդի Վարդանէսը: սրա փոխանակ 41 թուին թագաւորում է Գոտարգէսը, որ իւր անգթութեան պատճառով հալածուում և կրկին Վարդանէսն է թագաւորում (42. յուլիս): Մինչ Վարդանէսը ներքին կռիւներով էր զբաղուած, հռովմէացիք կրկին պարթևներից խլեցին Հայաստանը և Կլաւդիոս կայսրը գերութիւնից արձակեց Հայոց թագաւոր Միթրիդատեսին (վրաց թագաւորի նորօրը): սա հռովմէական և վրացի զորքերով Հայաստան խուժեց, յաղթեց Գամնաքս սատրապին և տիրեց Հայաստանին:

Վարդանէսը Գոտարգէսի հետ հաշտուեց, տիրեց Սելեւկիա քաղաքին և սկսաւ ծրագրել կազմել Հայաստանին տիրելու մասին: սակայն ներքին խռովութիւնները թոյլ չը տուին նորան այդ գործին ձեռնարկելու: Գոտարգէսի երրորդ ապստամբութիւնն ևս ձնչեց նա, այդ հակառակորդին հալածեց մինչև Սինդէս (Թէքէտ) գետի ափունքն և մի յուշարձան կանգնելով այնտեղ, յետ դարձաւ: Յաղթութիւններով գոռոզացած Վարդանէս սկսաւ անգթութիւններ գործել, ուստի և գաւաղրութեամբ օրսի ժամանակ սպանուեցաւ: երկի 45 թուին, Գահը կրկին բռնաբարութեան առարկայ դարձաւ, ապա թագաւորեց կրկին Գոտարգէսը, որի անգթութիւնների պատճառաւ պարթևները թագաւոր խնդրեցին Հռովմէ եղած պատանդներից: 49 թուին Գայոս Կեսարը տուաւ նրանց Մեհերգատէսին (որ է Միթրիդատէս Ե.): որի հետ միա-

ջան Ուռհայի թագաւոր Արգար Ե. և Ագիարէնէի թագաւոր Իգատէսն: Գոտարգէսը նախ իւր կողմը զրաւեց Մեհերգատեսի կուսակիցներին և ապա շրջապատելով նրա բանակը, մեծ յաղթութիւն տարաւ նրա վրայ, ջարդելով գրեթէ նորա բոլոր զօրքը (50 թուին): Պարտուած Մեհերգատէսն ընկաւ յաղթականի ձեռքն, որ նորա ականջները կտրելով արձակեց, իսկ ինքը Գոտարգէսը հիւանդանալով մեռաւ մի տարի յետոյ (51 թուին): Սրան յաջորդեց Արտաւանէս Գ.-ի եղբայր, Ագիարների թագաւոր Վոնոնէսը, որ շատ կարճ ժամանակ թագաւորեց (51—54):

Վոնոնէսի աւագ որդին Վոլագաղէս (Վաղարշակ) Միլետացի մի հարձի գաւակ էր, բայց այսու ամենայնիւ թագաւորեց պարթևաց վրայ իւր եղբայրների համաձայնութեամբ: Ապագայ խռովութիւնների առաջն առնելու համար՝ սա իւր եղբայրների թագաւոր դարձրեց սահմանակից երկրներում: Պակոռոսը (Բագուր) ստացաւ Արոյստականը, Մարաստանը, Տիրիդատէսի որդեց տալ Հայաստանը, սրանք պէտք է մեծ արքայից յետոյ երկրորդ և երրորդ աստիճան ունենային: Պարթևաց տէրութեան մէջ չորրորդ թագաւորութիւնը կազմում էր արեւելեան Իրանն և Ինդոսի շրջակայ երկրները: հինգերորդը Մաղքեանց աշխարհը (Վովկասի հիւսիսային զառիվայրը, ուր 19 թուին Քրիստոսից յետոյ իշխում էր մի արշակունի թագաւոր): Աղաթանգեղոսի և Սերէոսի յիշած պարթևական չորս թագաւորութիւնները ճիշտ են, եթէ աչքի առաջ ունենանք՝ որ ատրպատական տէրութիւնը վերջը միացաւ բուն Պարսկաստանի հետ:

Հայաստանին տիրելու լաւ առիթ ուղաւ Միթրիդատեսի սպանումն իւր ազգակից Ռատամիստոսի ձեռքով: Պարթևները յարձակուեցան Հայաստանի վրայ (52 թ.) և արքայատան յափշտակիչը փախաւ ստանց դիմադրութեան: Տիրիդատէսը տիրեց Արտաշատ և Տիգրանակերտ քաղաքներին: Պարթևեանց բանակում՝ ժանդախտ երեւեցաւ և նրանք ստիպուեցան քաշուել Հայաստանից (53): ուստի Ռատամիստոսը կրկին թագաւորեց: Ժողովրդական ապստամբութիւն ծագեց Հայաստանում և Ռատամիստոսը վարնուեցաւ 54 թուին: պարթևները հանդամներից օգտուեցան և կրկին տիրեցին Հայաստանին առանց որ և է դիմադրութեան հանդիպելու: Հռովմէացիք չէին կարող թոյլ տալ, որ Հայաստանը կրկին պարթևական երկիր դառնայ: ուստի Վոլագաղէսի ընդդէմ



հանեցին Վարդանէսի որդի Նանէսին եւ Սկիւթացիներին որդեցին պարթեւների վրայ յարձակուել: Վոլազեզէսը զօրքերը կանչեց Հայաստանից (55 թ.) եւ հաշտութիւն արաւ հռովմայեցոց հետ: Նանեսի դրամները 55—58 թուականն են հասնում, մինչ Վոլազեզէսինը վերսկսուեցան 61 թուից: Վոլազեզէսը 58 թուից սկսում է դարձեալ արշաւանք դէպի Հայաստան առանց հռովմայեցոց դէմ պատերազմ հրատարակելու: հայկական պատերազմները համարուում էին Տիրիդատեսի գործ, որ կապ չունէր արքայից արքայի հետ: Այս անգամ պարթեւները շատ թոյլ էին. 58—59 թ. Դոմեցիոս Կորբուլոնն առանց մեծ ճիւղերի տիրեց Արտաշատին եւ աւերեց այդ մայրաքաղաքը, զրաւեց Տիգրանակերտը եւ ամեն տեղ հռովմէական գերիշխանութիւնը վերականգնեց: Հայաստանում Ներոն կայսեր հրամանով թագաւորեց Տիգրան Ե., որ հերովդեան ցեղի Կապադոքիայ տեղափոխուած ճիւղիցն էր: Վերջապէս ներքին խռովութիւնները դադարեցին Պարսկաստանում: Վոլազեզէսը ծանաչեց Վրկանաց (Հիւրկանիոս) աշխարհի անկախութիւնն եւ ձեռնարկեց Հայաստանին տիրելու գործին: Հանդիսաւոր կերպիւ թագաւոր պսակեց Տիրիդատեսին, ազատանիներից բաղկացած զօրախմբով՝ որի հրամանատարն էր Մոնէզէս, եւ Ատրպատականի թագաւոր Մոնաբագոս Բ.-ի զօրքերով Տիրիդատէսը դուրս եկաւ Տիգրան Ե.-ի դէմ, որ արշաւել էր դէպի Ատրպատական: յետ մղեց նրան եւ պաշարեց Տիգրանակերտում: Վոլազեզէսն ինքը պատերազմի դաշտը դուրս եկաւ: Մ'ձգնում պատահեց նրան Կորբուլոնի մի դեսպանը, որի միջոցաւ գինադադար հաստատուեցաւ մի առ ժամանակ: որի զօրութեամբ պարթեւները Տիգրանակերտի պաշարումը վերցրին եւ դեսպաններ ուղարկեցին Ներոն կայսեր մօտ: Զինադադարի զաւոտն յօդուածներից մէկն այն էր, որ հռովմայեցիք պիտի յետ կանչէին Հայաստանից Տիգրան Ե.-ին պաշտպանող հռովմէական զօրքերին: Այս անպատուարք գիշումն արաւ Կորբուլոնը այն պատճառով, որովհետեւ կրօնով եւ քարքով պարթեւներին աւելի մերձաւոր հայ ժողովուրդը միշտ պարթեւների կողմն էր հակուում: Իսկ

հռովմէական իշխանութեան հարստակում էր այն ժամանակ միայն, երբ այդ իշխանութեան նեցուկ էր լինում հռովմէական քանակը:

Տիգրան Ե. թէպէտ ներուրեւան ցեղի առ հռովմէացին ունեցած ստրուկ հոգու տէրն էր, բայց ոյժ եւ եռանդ չունէր մի ապստամբ ժողովուրդ սանձելու: Վոլազազեսի խաղաղութեան պայմանները չնդունուեցան հռովմում: ուստի եւ սկսաւ յայտնի պատերազմ:

Հայաստան ուղարկած հռովմէական զօրքերի հրամանատար Յէգէննիոս Պէտտար անգղուշաբար ցրուեց իւր ոյժերն եւ երբ վրտանգի մէջ գտնուող Տիգրանակերտին օգնութիւն էր կամենում հասցնել, յաղթուեցաւ Վոլազազեսից եւ յետ քաշուեց (62): Պարթեւաց թագաւորը Տարսուսի անցքերից դուրս եկաւ մի առ մի ջարդելով հռովմէացի պահապան զնդերն ու պաշարեց Արածանի հարսալին ստիերում Ռանդէայի մօտ Յէգէննիոս Պէտտարի քանակը: Պէտտար ստիպուեցաւ անձնատուր լինել, որովհետեւ Կորբուլոնը դիմամբ ուշացաւ Ատրիքից նորան օգնութեան հասնելու: Հռովմէացիք ստիպուեցան դուրս գալ Հայաստանից եւ պարտուած զօրքը դնու մի կամուրջ եւս շինեց Արածանու վրայ պարթեւների համար: Կորբուլոնը աշխատել էր Եփրատի սահմանները պահպանել, մինչեւ իսկ ամրոցներ էր կառուցել միւս ափին: Թըշնամու երկրում: Մոնէզէս զօրավարի հետ տեղի ունեցած տեսակցութեան ժամանակ Կորբուլոնը համաձայնեց քանդել այդ ամրոցները, սրա փոխարէն պարթեւները խոստացան Հայաստանից դուրս գալ եւ սպասել Ներոն կայսեր ուղարկուած դեսպանների լեւելիք պատասխանին: Հռովմում վրձնեցին պատերազմը շարունակել եւ հրամանատար կարգեցին կրկին Կորբուլոնին: Հագիւ անցել էր նա Եփրատն եւ ծովաց աշխարհն էր մտել, որ Վոլազեզեսի ու Տրդատի դեսպաններն ընդառաջեցին եւ խաղաղութիւն առաջարկեցին: Ռանդէայում՝ Տիրիդատէսը տեսակցեց Կորբուլոնի հետ, ուր որոշուեցաւ, որ Տիրիդատէսը բոլոր քանակի դիմացը կայսեր պատկերի առաջ փայր դնէ իւր թագը եւ ապա հռովմ ուղեւորուի նոյնը կայսրից ստանալու համար: Վոլազազէսն ու Մոնէզէսն



ևս պատանդներ տուին իրենց այս խոստման  
կատարումն երաշխաւորելով: Տիրիդատեսի  
ուղեւորութիւնը տեւեց մինչեւ 66 թիւը, երբ  
նա Հռոմում մեծ շուքով ընդունուեցաւ եւ  
ներսն կայսեր ձեռքով Հայաստանի թագաւոր  
պատկուեցաւ: Այս եւթն երկու կողմին եւս գո-  
հացրեց: հռովմէացիք իրենց գերիշխանութիւ-  
նը հաստատեցին Հայաստանի վրայ: իսկ պար-  
թեաները կարողացան իրենց թագաւորական  
ցեղի մի միւրը Հայաստանում թագաւորեց-  
նել որով պարթեաններն աւելի շահուեցան  
քան թէ հռովմէացիք:

Ե Թ Ե Լ Ե Կ Ե Լ Ի

## Ն Ի Ի Թ Ե Բ

ԱՂՈՒԱՆԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐ

Մովսէս Կաղանկատուացու Աղուանից Պատմ:  
երկաթագիր (Ա. խումբ) օրինակից մի  
պակաս հատուած:

Կախորդ յօդուածով տեսանք, որ եր-  
կաթագիր օրինակը 1676 թուականին Զա-  
քարիա Սարկաւազ պատմագիրը նորոգել է  
և պատմութեան պակասը լրացրել՝ արտագրե-  
լով թերին այլ ձեռագիր օրինակից: Միայն թէ  
Զաքարիան Աղուանից պատմութեան մէջ, (եր-  
կաթագիր օրինակում), մի խոշոր հատուածի  
պակաս լինելը չի նկատել, որի վերայ և դարձ-  
նում ենք այժմ բանասերների ուշադրու-  
թիւնը:

Երկաթագիր օրինակում 1Բ (32) տետրը  
բաղկացած է տասն թերթից՝ մինչդեռ ամբողջ  
ձեռագրի տետրերը՝ շատ քիչ բացառու-  
թեամբ՝ բաղկացած են տասներկու թերթից.  
այսպիսով 1Բ. տետրից պակասում է երկու  
թերթ: Ահա թէ ինչպէս: Չեռագրի զ. 371Բ.  
երեսը վերջանում է «լուսաճաճանչ» բառով,

իսկ զ. 372ա. սկսում է «և կատորեաց զնո-  
սա» խօսքերով: Սոցանից առաջին թերթը  
Զաքարիան նշանակել է ՅՀԳ. Թուահամարով  
իսկ Բ.-ը ՅՀԳ. Թուով. ուրեմն նա երկաթագիր  
ձեռագիրը նորոգելու ժամանակ մէկը միւսի  
անմիջական շարունակութիւնն է համարել և  
թերթ մասը չէ նկատել: Այդ պահանս է ահա,  
որ տալիս ենք այժմ՝ առնելով երկրորդ խմբի  
պատկանող օրինակներից:

ՊԱՏՄ. ԱՂ. ԳԻՐԳ Գ. ԳԼ. Ի.

— իսկ յետ երկից ամաց (834 թ.)  
բազմի<sup>1</sup> ոմն ամիրայ<sup>2</sup> եկեալ հրամանաւ իշ-  
խանին Տաճկաց, որ ամիրիմոմին<sup>3</sup> և կոչի<sup>4</sup> հա-  
սեալ<sup>5</sup> ի Սախաւան քաղաք, անդ ըմբռնի<sup>6</sup>  
մանուկ մի Յոհան անուն ի ձեռս նորա, և  
սակս հաւատոցն որ ի Բրիստոս չարաչար  
տանջեալ նահատակի ի սուրբ քառասունն<sup>7</sup>  
մերձ յաւր<sup>8</sup> սրբոյ պատեքին, որոյ նշխարքն  
լուսաճաճանչ<sup>9</sup> փայլմամբ<sup>10</sup> զթշնամիսն հիւ-  
ցուցանէր, <sup>11</sup> զոր տեսեալ նոցա, անհետեցին  
ի գիշերի և ոչ ոք զիտաց զնա ի քրիստո-  
նէիցն, պակտողին իւրում միայն մնա յայտ-  
նութեանն: <sup>12</sup>

Իսկ ի միւսում ամին (835 թ.) զաւուրս  
յՍ. եղելոյ սաստիկ անձրեաց, լցաւ ծայրա-  
ւիր հոսմամբ գետն Կուր, մինչև ԺԵ, հրասխ

1. Բ. Բազի մի: Ն. Բաղխայ:

2. ԲՆ. Եմիրա:

3. ԲՆ. Եմիրմոմին:

4. ԲՆ. Կոչի:

5. ԲՆ. «յասեալ». նորա:

6. ԲՆ. ըմբռնէալ:

7. ԲՆ. Քառասներորդն:

8. Բ. օր: Ն. յաւուրս:

9. Երկաթագիր օրինակում սոյն վկայարանութիւնը  
թերթ է եւ վերջանում է «լուսաճաճանչ» ով. նոյնը եւ Մովսէս-  
յի հրատարակութեան մէջ:

10. Բոլորագիր օրինակից ամբողջացնում ենք պա-  
կասը, իսկ նօտրագիր օրինակի տարբեր ընթերցումները  
ծանօթութեանց մէջ:

11. Պարսեան տպագրութեան մէջ «փայլմամբ ա-  
հացուցանէր զթշնամիսն»:

12. Թէ ինչպէս է, որ Պարսեան հրատարակութեան  
մէջ սոյն վկայարանութեան վերջին կտորը «փայլմամբ...  
մնա յայտնութեան» մտնել է, իսկ մնացեալ պատմական  
մեծ հատուածը պակասում է, այս մասին մենք զփութա-  
րում ենք որոշ քան ասել, քանի որ յիշեալ հրատարակու-  
թեան մեռագրերը մեռքի տակ չունին: